Ապահովագրական հատուցման դիմումի ներկայացման եղանակը

Ապահովագրական հատուցման դիմումը համապատասխան ապահովագրական ընկերությանը կարող եք ներկայացնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1. առձեռն՝ համապատասխան ապահովագրական ընկերության գրասենյակում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, իսկ ներկայացուցչի միջոցով դիմելու դեպքում՝ նաև լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը,
2. պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից համապատասխան ապահովագրական ընկերության պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով, ընդ որում նման եղանակով ներկայացված դիմումները համարվում են ստորագրված դիմողի կողմից,
3. Ապահովագրական ընկերության պաշտոնական հեռախոսահամարին հեռախոսազանգի կամ տվյալների փոխանցման փաստն արձանագրող այլ տեխնիկական միջոցով դիմումի լրացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը ապահովագրական ընկերությանը հայտնելու միջոցով՝ պայմանով, որ հայտնած տեղեկատվության հիման վրա դիմողի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ապահովագրական ընկերության կողմից ուղարկվել է ծանուցում, որին կցված է Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոններով սահմանված ձևով լրացված համապատասխան դիմումը,
4. Ապահովագրողի պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնում (առկայության դեպքում) կամ համապատասխան բջջային հավելվածի միջոցով դիմումի լրացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով՝ պայմանով, որ մուտքագրված տվյալների փոխանցումը պետք է հաստատվի դիմողի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին կամ դիմողի հետ կնքված ԱՊՊԱ վկայագրում նշված Ապահովադրի հեռախոսահամարին ուղարկված հաղորդագրությունում նշված նույնականացնող ծածկագրի մուտքագրմամբ կամ հատուկ հղման հաստատմամբ: